

ՄԻԿՐՈԻՆՎԱԶԻՎ ԴԵՍՑԵՄԵՏՈՂԱՍՏԻԿԱ ԱՌԱՋԻՆ 20 ԴԵՊԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Օ.Գ., Ներուն Վ.Վ., Գունդորովա Ռ.Ա., Սմետանինա Մ.Ն.,
Դանիլովա Դ.Յու.

Մոսկվայի Զ. Զելմիոլցի անվան աչքի հիվանդությունների գիտահետազոտականինստիտուտ, Մոսկվա, ՌԴ

Ներկայացված են միկրոինվազիվ դեսցեմետոպլաստիկայի (ՄԴ) արդյունքները 20 հիվանդի մոտ (21 աչք): Դիտարկման ժամանակահատվածը կազմել է 3–12 ամիս: Ներկայացված է ՄԴ վիրահատության տեխնիկան: Վիրահատության ընթացքում տեղի են ունեցել դեսցեմետյան թաղանթի (ԴԹ) եզրային պատռվածքներ, ԴԹ մասնակի ներհրում դեպի հետին խցիկ, առաջային խցիկից ԴԹ արտանկում, թունելային կտրվածքում՝ ԴԹ սեղմում: 14%-ի դեպքում հանդիպել է ԴԹ կենտրոնական դիասթազ, 24%-ի դեպքում՝ ԴԹ ծայրամասային դիասթազ: Եղջրաթաղանթի թափանցելիությունը վերականգնված է 100% հիվանդների մոտ: Վիրահատության 1-ին օրից սկսած մինչև 2 շաբաթ ժամանակահատվածում մոտ 90% հիվանդների մոտ կորեկցվող տեսողության սրությունը հավասարվել է 0,2 և բարձր: 15%-ի դեպքում վիրահատության հաջորդ օրը տեսողության սրությունը կազմել է 0,9-1,0: Վիրահատությունից 1 ամիս հետո 76%-ի դեպքում տեսողության սրությունը հավասար էր 0,5 և բարձր: Վիրահատությունից մեկ ամիս հետո 14%-ի դեպքում մաքսիմալ աստիգմատիզմը կազմել է 4,5D- 5,5D, 9%-ի դեպքում՝ 3,0D- 3,75D, 76 %-ի դեպքում՝ 1,5D և ցածր: 3 ամիս հետո 90%-ի դեպքում մաքսիմալ աստիգմատիզմը կազմել է 1,5D և ցածր: ԴԹ փոխպատվաստումը ըստ ֆունկցիոնալ տվյալների արդյունքների, վերականգման ընթացքի, միկրոինվազիվության և ինքնարժեքի գերազանցում է էնդոկերատոպլաստիկան: Ըստ հեղինակների, չպետք է հրաժարվել տվյալ մեթոդի հետագա ուսումնասիրություններից հեռանկարային լինելու նկատառումով: